


17145



1911

ՄՆԱՅՈԿԱՆ ՍԷՄԵՐՁԵԱՆ

(ԶԵՑԹՈՒԽԵԱՆ)



ՊԻՂԵՒՈՐԱԿԱՆ ՆՈՐԵՐ



1911

2003

ԳԻՆ 40 ՓԲԸ.

891.99
U-38

Մարզպան . /ու և շամփու/

891.99

v-38

Eur M 205 195

ՈՒՂԵԿՈՐԱԿԱՆ ՆՕԹԵՐ



Հազար ութի հարիւր ինստուն հինգին,
Հըսւեր կարդացին՝ կիլիկոյ թեմին,
Թեմականք Սատանա կը հաւաքուէին,
Կաթողիկոս ընարելու՝ զայն չմոռացայ:

Զէլթունի ալ եկաւ այդ հրաւերը,
Ժողով գումարուեցաւ կիրակի օրը,
Հսին — կաթողիկոս պէտք է Աթոռը.
Արդ զրկենք մի մարդ՝ զայն չմոռացայ:

Սկսան քուէ տալ չորս մարդու անուն,
Հսին՝ շուտով դնա՛ խմբի գումարման.
Չըսին մեղի, «Զէլթուն անպիտան Աւան»
Այդ խօսքն ալ ըսուեցաւ՝ զայն չմոռացայ:

Դժբախտաբար կ'ըսեմ, քուէն ինձ ելաւ,
Աղաչեցի իրենց չերթամ՝ ինձ շատ լաւ.
Հսին ինձ — եփուած է արդէն այդ փիլաւ.
Մեզմէ ալ քիչ մ'իւղ տար զայն չմոռացայ:

Երեսփախան եղանք Աւնիփոյ կողմէն,
Ըսկեր մըն ալ տուին Զաքրեան տունէն
Շնորհակալ եղայ ես իմ ընկերէն,
Աւագ կ'ըսուեր ան, զայն չմոռացայ:

Հազար ութի հարիւր ինստուն հինգին,
Մայիսի տասնըեսթը՝ Մարերի տասնին,
Մեկնեցանք գնալու ժողով Ատանային,
«Մնաք բարիս՛ւ» ըսինք զայն չմոռացայ:

Զի նստանք, վեց օրէն Ատանա հասանք,
Երեք նիստ ընելով հազիւ խալսանք,
Քուէի հաշիւով գործէ չուտ տեսանք,
Ծնծութեամբ լրացաւ, զայն չմոռացայ:

160 37

60910-ակ

7360-73

Յունիս ամսոյ վեցին գործը լրացաւ
Անմիջապէս Պոլիս հեռագրուեցաւ,
Ալէաթձեան սրբազնլն լնարուեցաւ
Սւած, չվայելեց՝ զայն չմոռացայ:

Իյեղճն աթոռ նատելու բախար չունեցաւ,
Սուլթան Համիլտէն ալ չվաւերացաւ,
Մաղաքիս պատրիարքէն իսկ բեկանեցաւ
Դժբախտ մեռաւ խեղճը, զայն չմոռացայ:

* * *

Երեք ամիս ես Սաանա մնացի,
Զաւակս Մերսին էր զինքն այցելեցի,
Սեպահմբէր ամսուն Քիլիս դնացի,
Անցազիրս քննեցին, զայն չմոռացայ:

Էշաապաւմ էի ես Հայրենիք գնալ,
Յանկարծ հիւանդացայ՝ պէտք եղաւ մնալ,
Հիւանդ վիճակիս մէջ բանտարկուիլն ալ...
Նոյեմբեր մէկին էր՝ զայն չմոռացայ:

Զէյթուն Համիլտ դէմ պատերազմեցաւ,
Ամէն տեղ Հայ ազգը շատ տառապեցաւ,
Մայրն իւր մանկան հետ սրով խովողեցաւ,
Հայուն ճգնաժամն էր զայն չմոռացայ:

Ես ալ բանար հօթը ամիս մնացի (*)
Երբար արձակուեցայ Սուրբ երկիր գացի,
Սիրուն հայրենիքս ինչո՞ւ չգացի...,
Արգելքներ շատ էին՝ ես շուտրեցայ:

Չուզեցի ես Սուրբ Երուսաղէմ մնալ,
Կարօտով ուզեցի Հայրենիք գնալ,
Իջայ Յոպէ, գտայ պատրաստ նաև մըն ալ,
Բոնաւորը թոյլ չտուաւ՝ զայն չմոռացայ:

Ծուարմամբ մեկնելով՝ գնացի կիպրոս,
Երջանիկ մնացի՝ մի տարի ես հոս,
Երեակայութեամբ՝ կ'երթացի Տաւրոս,
Այս ճգնաժամերս ալ ես չմոռացայ:

Անկէց ալ մեկնեցայ Աղէքսանդրիա,
Տէր Բարթողիմէ հայր սուրբը գտայ.
Միասեղ ապրեցանք, գժուար զատուեցայ,
Տարի ու կէս մնալս ալ՝ չմոռացայ:

* *

Հազար ութը հարիւր իննառւն ինսին,
Մարտ ամսոյ թուին ալ ճիշդ տասն և ինսին,
Վերջին հրաժեշտ առւի՛ արի Հայր սուրբին
Վարդապետիս արցունքը՝ ես չմոռացայ:

Աղէքսանդրիաէն մաայ մէջ նաւին,
Նպատակս էր երթալ՝ Սուրբ էջմիածին,
Բարեկամներս ինծի յուղարկի եկին,
Անսնց բարի մաղթանքն՝ ես չմոռացայ:

Ծոգենաւնիս ժամ երկուքին մեկնեցաւ,
Նախ Կրեաէ կղղիին հանդիպեցաւ,
Երկրորդին ալ Փիրէի առջեք կեցաւ,
Երրորդին Զմիւռնիա՝ զոր ես մոռացայ :

Չորրորդին ալ չէ սր Սթանպօլ հասանք,
Քառասուն ժամ նաւին՝ մէջ հանգստացանք,
Պոլսոյ տեսարանէն՝ մենք չըկշտացանք,
Երթեւեկի արգելքը՝ ես չմոռացայ :

Ծութերսրդում աւուրդ հասանք Օտեսա,
Մաքսատունի մէջը շատ տանջանք տեսայ,
Մաստիկ յուրա օդերուն ի՞նչ կըսես՝ ասա'
Այն իրիկուան յուրալ՝ ես չմոռացայ :

Օտեսա՛ ալ ինն օրեր մնացի,
Յակովը աղային չանքը վայեցի,
ինն օրէն յեսոյ Պաթում գնացի.
Երզրումցոց գանին՝ ևս չմռացայ:

Պաթումէն մեկնեցանք գնացինք Տփլիս,
Կուր գետը կ'հսուէր որպէս իբր Տիգրիս,
Մեծ պահնք հանդիսեցաւ չկերուեցաւ միս,
Ֆասուլիա կերակուրն՝ ևս չմռացայ:

Թիֆլիզի մէջ մի բարեկամ հանդպատ,
Մշեցի Սմբատն էր՝ զիս դանին տարաւ,
Խարդախութեամբ ինձմէ ութ ռուսլի տաւ,
Այս խաչագող վատը՝ ևս չմռացայ:

Եջմիածին գնալուս ինձ լնկերացաւ,
Նորէն ձաբան ինէ դրամ փոխ տաւ,
Այդ փոխառութիւնն ալ, կերա՛ւ ու կերաւ,
Այս առաւ փախաւը՝ ևս չմռացայ:

Այս խաչագողին մենք բարիքներ ըրինք,
Աղեքսանդրիոյ մէջ մեր սենեակն առինք,
Փոխառակ բարիքնուս ըրաւ մեզ չարիք,
Այս ապերամն պարոնն՝ ևս չմռացայ:

* *

Հազար ութ հարիւր իննուն իննին,
Հասանք Աւագ շաբաթ Ս. Եջմիածին
Փափաքս այն էր որ՝ հասնինք Ս. Զատկին
Ապրիլ տասն և ութն էր՝ զայն չմռացայ:

Տէր Դեռնդեան պարոն Սմբատ զիս տեսաւ,
Զատկի խթման իրկուն ինչոյք մը արւաւ,
Ուսեղ Անդրանիկն ալ սեղանակցեցաւ,
Այս Մշեցւոյն պատիւը՝ ևս չմռացայ:

Ս. Զատկին Հայրիկը ինք պատարագեց,
Արժանաւորներէն շատերն հաղորդեց,
Միւս օրը գժոխաքին վրայ քարողեց,,
Սքանչելի փաստերը՝ ևս չմռացայ:

Ս. Գայլիննէի վանքն՝ քարողեց Հայրիկ,
Քաղցրաբարբառ բերնով երգեցին գովիք,
Այս քարողին շատուոր էին ունկնդիրք,
Հիմնալի քարողն՝ ևս չմռացայ:

Հասւ մեր Տէր Յիսուս քակեց գժոխաքը,
Շուտ այցելեց մարգարէից ժողովքը,
Նահապեաց ու արդարոց մեծ խումբը,
Փաստերնին փրկիչն էր՝ ևս չմռացայ:

Եջմիածին ատաներկու օրեր մնացի,
Բոլոր թանգարաններն ալ այցելեցի,
Լուսուորիչ Ս. Հօր Աջն համբուրեցի,
Գեղարդը պագնելս՝ ևս չմռացայ:

Թէորգեան ճեմարանն ալ այցելեցի,
Աճառեան պարսնով միասին գայի,
Մարտիրոս պատուելին էր Ագուլեցի,
Զերմ պատուասիրելնին՝ ևս չմռացայ:

Բոլոր ուսուցիչներն զիս ընդունեցին,
Իրու սիրոյ արդիւնք, թէյ հրամցուցին,
Նուագարաններավ քաղցրիկ երգեցին,
Պատուելեաց պատիւները՝ ևս չմռացայ:

Եջմիածնայ տեղը դաշտավայր մըն է,
Շուրջը Ս. վանքերով սրբավայր մըն է,
Անտառը գեղեցիկ դրախտավայր մըն է,
Լճին գեղ տեսարանն՝ ևս չմռացայ,

Շողակաթ, Հոփափիմէ, Գայիանէի վանք,
Հնութիւնք կը սեպուին սոցա գերեզմանք,
Անդրանիկ նահատակք, այս չքնաղ կուսանք,
Այս վանքերն ալ ուխտելո՞ւ ես չմռռացայ :

Զոյգ Մասիս, Արագած դէմ յանդիման է,
Նոյեան Տապան Մասիս սարի՝ գագաթն է,
Արագած նայելով Մասիս ալեար է
Այս լեռանց տեսարանն՝ ես չմռռացայ :

Սուբբ էջմիածնում՝ Հայրապետանոց,
Բուն Մայր Աթոռն է սեփհական Հայոց,
Առօրիայ հինգ հարիւր՝ մարդ կուտէ հոս հոց(*)
Հիւրասէր ըլլալին՝ ես չմռռացայ . . . :

Ներսէս կաթողիկոս Աշտարակեցին,
Մատթէսս կաթողիկոս՝ Բնիկ Պալսեցին,
Գէորգ կաթողիկոս՝ Բիւզանդիացին,
Հայ ազգի պարծանքներն՝ ես չմռռացայ :

Անտառ և լիճ Ներսէս՝ շիներ անկեր է,
Շուկոյի շենքն ալ Մատթէսս հիմներ է,
Շքեղ ձեմարանն ալ Գէորգ կանգներ է
Այս յիշատակները՝ ես չմռռացայ :

Երից կաթողիկոսաց անման յիշատակ,
Հայ ազգի սերունդին մնայուն կատակ,
Գէորգեան ձեմարան դրախտ է շիտակ,
Սոյս գեղեցկութիւն ես չմռռացայ :

Կարապետ կաթողիկոս բնիկ ունեցւոյն,
Գերեզմանը վնառեցի իմ հայրենակցւոյն,
Գտայ, ուրախայաց շիրիմը իսկ նոյն,
Խոնարհելով համբուրելո՞ւ ես չմռռացայ :

Սուբբ Հոփափիմէ վանքի գաւիթն է թաղ-
ուած,
Ափամն, Գերեզմանի քարին ալ խանգարուած,
Եօթը հարիւր երեսուն թուոյն վախճանուած,
Վախճանման թիւն անգամ՝ ես չմռռացայ :

Վարդապետ մը առի գերեզման ապրի,
Հոգւոց լսել առի, շիրմին նշխարի,
Պատարագ կը վազէր՝ այս վեհապետի,
Փաղ քիչ բլազուն՝ չկարողացայ :

Բոի իրեն ելի՛ր գերեզմանէդ վեհափառ
Ազօթէ վասն Ազգիդ փրկութեան առ Հայր,
Զէյթունցիքս համբուրեն ահա ձեր նշխար,
Ծիրմուդ գանելուս՝ շատ ուրախացայ :

Ինձի լսու, պարո՞ն՝ քեղի չեմ ճանչնար,
Բոի իրեն, գրայինդ եմ, ինչո՞ւ, չե՞ս ճանչնար,
Բուռ ինձի, քաջ Զէյթունէս ի՞նչ խապար,
Բոի իրեն, քաջայալիթ են՝ զայս չմռռացայ :

Բոի իրեն, ո՞րի հովուապետ բարի,
Ազօթեա՛ վասն Աւլնիոյ քո հայրենիքի,
Բուռ ինձի՝ ողջոյն առը Աւլնիայի,
Այս բերկրալի խօսքը՝ ես չմռռացայ :

Հարազատ գաւակն է քաջն Զէյթունայ,
Անսր ազգն ու ցեղ գեռ հոն կը մնայ,
Եէսի տիւնեա թաղէն՝ քար ժայռէն է նու,
Անոնց Դահկոնց կըսեն՝ զայտ չմռռացայ :

* *

Հազար ութը հարիւր իննառւն իննին,
Ճի՛շդ Ապրիլ ամսոյ քսան և իննին,
Պահպանիչ և նշխարքն առի Հայրիկին,
Երախտեօք մեկնիլո՞ւ ես չմռռացայ

Հայրիկը Զէյթունը օրհնեց ու օրհնեց,
Վեց հազար բուղլի ալ ի Զէյթուն խաւրեց,
Որբանոց թող բայուի, լսաւ թելադրեց,
Երախտապարա մնալս ես չմոռացայ:

Սյո թուոյն մեկնեցայ Ս. Էջմիածնէն,
Փափաքս ալ լեցուցի վեհափառ Տեսունէն,
Օրհնէնք արտասանեց մեղրածոր բերնէն,
Օժանդակ մաղթանքներն՝ ես չմոռացայ:

Հիւրընկալին ես սուրբ աջը առի,
Միքայէլ հայր սուրբն էր՝ բառ «հրթ բարի»,
Միքանի փող տուի, ինչ ըրի, ըրի,
Նորին արժանիքն ալ՝ ես չմոռացայ:

Էջմիածնէն ելայ Երեւան անցայ,
Տեղւոյն Առաջնորդէն հիւրընկալուեցայ,
Անձամբ զիս այցելեց՝ շատ ուրախացայ,
Նորին պատիւները՝ ես չմոռացայ:

Երեւանէն ելայ Հաճի վանք հասայ,
Յովէլ վարդապետէն շատ պատիւ տեսայ,
Պատւոյ չափը անցուց՝ գըժուար խալըսայ,
Հիւրասէր հայրասւրբը ես չմոռացայ:

Հաճի վանքէն ելայ՝ Կիւմրիւ գնացի,
Անիի փափաքով այնաեղ մնացի.
Վեց օր վերջը Անին երթալ ուզեցի,
Ճամբու ոլոտաստութիւնն՝ ես չմոռացայ:

* * *

Մեկնեցայ Կիւմրիէն՝ Այլիս ութ թուին,
Փափաքս այն էր որ այցելեմ Անին,
Ժամը չորսի առեն հարսւած կարկուաին,
Այս տանջանքը՝ երբեք ես չմոռացայ:

Անիի մօտիկլը՝ ամսեր գոռացին,
Ճայթիւն, կայծակ, մրրիկ խիստ որոտացին,
Քառորդ ժամ կարկուաներ անչտի տեղացին,
Դժուար ազատուիլս ես չմոռացայ:

Կիւմրիէն մեկնելուո՞ ձի չէինք գտած,
Մարդու մը եղան սայլն էինք նստած,
Այսպիսի կարկուաներ՝ ցարդ չէինք տեսած,
Լացի մինչև անգամ, զայն չմոռացայ:

Կարկուաը զավրեցաւ՝ սայլէն վար իջանք
Ըէինք տեսած երբեք՝ այսպիսի տանջանք,
Հնախան քալելով ըրինք բազում ջանք,
Այս ճննոտամեր՝ ես չմոռացայ:

Երեկոյենն ժամուն Զալա գիւղ հասայ,
Կարկուաի հարուածէն մի քիչ խալըսայ,
Պալշասար աղան ալ՝ հիւրասէր տեսայ,
Անոր միսիթարանքն ես չմոռացայ:

Այգուց տռաւօսաւն թողուցինք Զալան,
Առաջնորդ եղաւ ինձ Պալշասար աղան,
Բնկիր մը ես ունեցանք, կղեր մըն էր ան,
Յարութիւն հայրասւրբն էր, շատ ուրախացայ:

Զալա գիւղէն կէս ժամ հաղիւ մեկնեցանք
Անին երեկոյաւ ամէնքս հիացանք,
Սարսափ բանեց զմեկ, խիստ տառապեցանք,
Նոյն հիանողի օրն՝ ես չմոռացայ:

Պարսպի գաներէն՝ երբար ներս մտանք,
Մայր եկեղեցին շէնքը շուտ գտանք,
Սրամինիս յուզուած էր ինչպէս շատ չիւանք,
Այս ողբն ու կոծլն ալ՝ ես չմոռացայ:

Մեր լացը տեսնելով՝ Անին ալ լացաւ,
Սրցունքի կաթիներ մէկ խառնուեցաւ,
Յուսամ մեր Տէր Յիսուս ինքն ալ գթացաւ,
Այդ տիսուր տեսարանն՝ ես չմոռացայ:

Ներս ընդունեց զմեկ Մայր եկեղեցին,
Հսաւ «թշնամիք զիս սրբազզծեցին.
Զէ՞ որ քաջ թագաւորք ասաւ ազօթեցին,
Աւա՛զ, ուր են նոքա՝ զայն չմոռացայ:

Հսաւ «դարեր անցան՝ գմբէթս վլաւ,
Սրբատաշ քարերս վա՛տ քիւրալ տարաւ,
Սիրելի Հայ Ազգս ապերախս եղաւ
Այս անարդ տիսուլու՝ ես չմոռացայ:

Հսի Հայ ազգը ո՞հ, չէ՛ ապերախս,
Դարը դառն ըլլալուն՝ եղանք մինք դժբախս,
Դարը երբ քաղցրանայ՝ կ' ըլլանք բարեբախս,
Անհոգ եղիր լսի՝ զայս չմոռացայ:

Հսաւ կ' քայքայուիմ մէկը չը եր հոգ :
Կ' այցելեն և կ' ընեն կեր ու խում անհոգ,
Կը հոգա՞յ Հայ ազգն ալ՝ մի օր զիս արդեօք,
Արտասուեց սրբավայրն՝ զոր ես չմոռացայ :

Հսի ճակասագրին—հերիք չե՞ բրածդ՝
Հերիք է, ե՛տ դարձուր տւար տարածդ՝
Խղճանար չե՞ս բլար ան' Աւերածդ,
Այս իմաստավ յուզուիլս ես չմոռացայ:

Հիացման տեսարան են աւերակեր,
Կիսաւեր եղել են գեղեցիկ որմեր,
Ուր աչքէ դարձնես՝ հայազգի տառեր,
Այն տառերուն ի տես ես շատ յուզուեցայ:

Բիւր տւազելով մեկնեցանք քաղքէն,
Ծաղկեայ ձորն իջնելով՝ լայինք մեր մեղքէն,
Մի մարդ հանդիպիյաւ քիւրուերու դէմքէն,
Այդ հրէշ դէմքը ես չմոռացայ :

Հազար ութհարիւր իննառւն իննին
Մայիս ամսոյ ինն, Մարփր երկուսին,
Ահա այցելեցինք Աւերակ Անին,
Տրամութիւն պատեց զիս՝ զայն չմոռացայ :

Յարութիւն հայր սուրբը վանք հրատիրեց,
Հինգ վանքի անուններն աեղն ի տեղ պատմեց,
Իւզավ, մեղրավ ձոխ սեղաններ պատրաստեց,
Աս ազնիւ կղերը՝ ես չմոռացայ :

Մայիս ամս թուոյն՝ հինգ վանքից ելայ,
Այն օր դարձայ նորէն ի գիւղ Զալայ,
Երկրորդի օրն ալ՝ Ալէքսանդրաբոլայ,
Մի զիշեր հան մնալս՝ ես չմոռացայ :

Կիւմբիւի հայերը հիւրասէր էին,
Եկեղեցւոյ բակէն սենեալ մը տաւին,
Ճնորհակալ եղայ ես՝ երեյփախանին
Աւերիս Տիգրանոֆը՝ ես չմոռացայ :

* *

Կիւմբիւէն մեկնեցայ ամիսն էր Մայիս
Ամսոյն տառներիքին իջայ ի Տփղիս,
Գնացի չիփչիսակ վանքը Սուրբ Սարգիս,
Հայր սուրբը վանակեց զայն՝ չմոռացայ :

Վարդապետն ինձ բաւ «ասկից գու գնա՛,
Պէտք է պանդակ իջնես, ասիւտ ջանա,
Այս վանք կը պատկանի Ա. էջմիածնայ,
Այս անձոռնի խօսքերն՝ ես չմոռացայ:

Բոի ուխտաւոր եմ Ս. էջմիածնոյ ,
Հարազատ զաւակ եմ Քաջին Զեյթունոյ ,
Փասարօդներս ահա՛ քովս կը կենայ ,
Պարզ պատասխան ապլով՝ բաւականացայ :

Բառու ինձի, կամի՞ս սստիկան կանչեմ ,
Սրոք բրոք և այլն գքեղ ես ասնչեմ ,
Ելի՛ր, գնա՛ ասափ քեզ չճանաչեմ ,
Սորտ անպատութիւնն՝ ես չմոռացայ :

Բոի իրմն, հա՛յր ստորք, փասրօդներս ահս ,
Բառու—ինչ որ ըլլայ խարդախ մարդ մըն ես ,
Բոի—մի քիչ ջուր տամ՞ բերանադ մաքրես ,
Բառու հիմա և այլն՝ զայն չմոռացայ :

Վերջապէս Ս. Սարգսի վանքէն վանաեց ,
Բարբարոսութիւնը լըման կասարեց ,
Հայ աղդին աղն ու հաց կ'ուտէ այս երեց ,
Այս ապերախս երեցն ես չմոռացայ :

Երբ որ վարդապետէն վլորնտուեցայ ,
Զթախոֆի պանդոկ հիւրլնկալուեցայ ,
Գեարոս, Վասիլ պարաններէն սիրուեցայ ,
Նայունց միմիթարամնքն ես չմոռացայ :

Հրեայի նման հետո վարուեցաւ ,
Թաղէսս վարդապետ ըլլան ուրացաւ ,
Որչափ աղաչեցի գութ չշարժեցաւ ,
Այս անդութ հայրառորդը՝ ես չմոռացայ :

Յետոյ միքանի հեղ զիս քովը կանչեց ,
Զգնացի քովը, կարծեմ ամաչեց ,
Մարկոսեան պարոնը երբ որ զիս ճանչեց ,
Միջնորդեց քովը երթալ՝ զայն չմոռացայ :

Երբ որ քովը գացի բազում զղչացաւ ,
Ներողութիւն ինդբեց մի քիչ ալ լացաւ ,
Բառ քունս փախաւ՝ եղաւ ինձ շա՛տ ցաւ ,
Հաշտուեցաւ հետք՝ զայն չմոռացայ :

Սկսաւ պատուել զիս՝ չափազանց սիրեց ,
Ոմէն օր շարունակ՝ սեղան հրաւիրեց ,
Ուղիացւոց կենացը՝ բաժակներ պարպեց ,
Այս եղելութիւնն ալ՝ ես չմոռացայ :

Տփղիսաւ քաղաքք Հայով լեցուն է ,
Մեծամասնութիւնը մերիններուն է ,
Վաճառականութեան մէջ Հայը արթուն է ,
Շնորհքով հարուստ են՝ զայն չմոռացայ :

Կը գովեմ Տփղիսաւ դեռահաս դասը ,
Անուսը շտո քիչ է հարիւրին ատաք ,
Հայու արեամբ մնած՝ գանգիրնուն թար ,
Գովեսարից արժան են՝ զայն չմոռացայ :

Ունի Տփղիս քանի մը հայ տպարան ,
Ճոփ գրքերով լեցուն մատենադարան ,
Նշանուոր հիմնեալ՝ կան ընթերցարան ,
Շտո ընթերցանէր են՝ զայն չմոռացայ :

Տփղիսաւ Ներսէնեան մնուն ձեմարան ,
Աղքատ հարուստ սանուոյ է բնակարան ,
Ներսիսի Աշամարկեցւայն յիշատակարան ,
Հայուն Սուրբ բարերարն՝ ես չմոռացայ :

* * *
Հայոց եկեղեցիք՝ Տփղիս շատուոր են ,
Քահանայից տարազներն ալ շտո աղուոր են ,
Աւա՛զ կարգեր ու ծէս շտո խանգարուեր են ,
Այս խանգարուոծ ծէսերն ես չմոռացայ :

Կանոնագլուխը լըման վերցուերէ ,
Հանգստեան քողուածքն ալ մոռցուերէ ,
Լուսապայծառ ըստիլն ալ բարձուերէ ,
Այս գեղծումներն ալ՝ ևս չմոռացայ :

«Տէր զի բազում»ը կիսաս կը թողուն,
Ի՞նչ կը խօսիս՝ խօսիր , գոզ՝ ճարսպիկներուն ,
Բանանան կը չեխէ տիրացու աղուն,
«Զերկարես հա՛ » բուեն՝ ևս չմոռացայ :

Հաղար ութ հարիւր ինսուն քննին
Վարդավասի բարեկենդան Ս . կիբակին ,
Ս . Սարգիս վանքին մէջ մարդիկ շաս կային ,
Ես ալ ներկայ էի՝ գայն չմոռացայ :

Տէր հայր «իւզարերիյը » բեմէն չկարդաց ,
Հապա՝ մեծ պահց պէս ատեանը կարդաց ,
Յարութեան կիրակին մնաց գլխիքաց ,
Այս սխալ արարքն ալ՝ ևս չմոռացայ :

Ս . ամառի տականն ուստկառանք չկան ,
Փողոցի կօշիկով ատեանը կուգան ,
Մի մամ վառելսինին սուրբեր կը հոգան ,
Այս վարժունքնին երե՛ք՝ ևս չհաւնեցայ :

Հայոց եկեղեցեաց արարողութիւն ,
Արեւելք արեւմուտք մի՛ ծէս մի՛ դրութիւն ,
Տփղիսու եկեղեցեաց մէջ շա՛տ ատարդերաւթիւն
Տարբեր կացութեանյը՝ ևս չհաւնեցայ :

Տփղիսու մէջ երեք ամիս մնացի ,
Եկեղեցեաց մէջը քարող չլուցի ,
Տաճկահայ կղերը այն տեղ յիշեցի ,
Շատ ատարդեր գառայ ևս , գայն չմոռացայ :

Տփղիսու մէջ չէնք չնորհքով հայեր կան ,
Հիւրամիծար տեսայ Սիմոն Զաւարեան ,
Ինձ պասօն նուիրեց պարսն Սահակեան ,
Նոցունց պատուափրելը ևս չմոռացայ :

Տփղիսու մէջ Տիար Տիգրան Յովհաննէսեան ,
Լու խնամեց զիս՝ եղաս ինձ պաշտպան ,
Քանի , քանի հրաւիրեց զիս իւր օթեւան ,
Նորա երախափրելը ևս չմոռացայ :

Տփղիս կեցայ երեք ամիս ճիշդ ամառ ,
Օգոստոս տասներկու ելայ ճանապարհ ,
Պաթում իջայ գայոց մի աղնիւ Տէր հայր ,
Մեկեան Տ . Մեսրովընէր՝ գայն չմոռացայ :

Տ . Մեսրովը Սարը պէկ՝ խիստ պղնիւ աեսի ,
Առիւծեան հայր սուրբի՝ ականջը խօսի ,
Վանահայր Առւրը Սարգսի՝ քաղքին Տփղիսի ,
Նորին արժանիքն ալ՝ ևս չմոռացայ :

Տիգրան Օհաննէսեան ինձ առաջնորդեց ,
Պաթումէն նովրույսի նաւէն դուրս հանեց ,
Կարսի Օհաննէսին լաւ յանձնաբարեց ,
Ասոր ալ բարիքն ևս չմոռացայ :

Պարսն Օհաննէսն զիս Մոսկուա հանեց ,
Պէտք եղած աեղուանքը մէկտեղ այցելեց ,
Ուսումնասիրացը լա՛ւ նկարագրեց ,
Իր արթնամառութեան ևս շա՛տ հաւնեցայ :

Մոսկուա քաղաքը շքեղ ևն շիներ ,
Ուր աչքդ գարձնես եկեղեցիներ ,
Հաղար հարիւր կ'ըսուին տաճար ու վայրեր ,
Շլքեղ աեսարանները ևս չմոռացայ :

Մի զանգակ տեսայ, մեծ գմբէթի չտփ կայ,
Մեծ թնդանօթն ալ մօտ տեղեր չլոյ,
Ահապին արձանն ալ անոր մօտակայ,
Երկրորդ Աղեքսանդրն էր՝ ևս չմռացայ:

Յուրախ սասակութենէն շա'տ քիչ շրջեցայ,
Լազարեան ճեմարանն շքեղ չէնք գտայ,
Հայոց եկեղեցւոյ դիմոցըն է գա,
Դռնապանք ռուս էին՝ զայն չմռացայ:

Հայ եկեղեցւոյ չէնք շատ շրքեղ տեսայ,
Ժամկոչներ Ռուս էին, ինչ կըսեա, առա՛,
Արարակութիւնները ևս թերի տեսայ,
Զեղծումներ շատ էին՝ զայն չմռացայ:

Ի՞նչ փափաքավ եկայ ևս ի Մոսկուա,
Ութը օր մնացի, խիսա ցուրտ ձմեռուայ,
Շատ քիչ պատեցայ՝ սրանվ յուզուեցայ,
Այն ցուրտ օրերը ևս չմռացայ:

Օգոստոս ամսոյ ճիշդ քսան հինգին,
Ելանք Մոսկուայէն՝ հետ Օհանեանին,
Փափաքեցայ այցել Վարչաւ քաղաքին,
Փափաքու տեղն եկաւ՝ զայն չմռացայ:

* * *

Մոսկուայէն եկանք Վարչաւի եկանք
Աղնուութեան տիտղոսն Օհանեանին տանք,
Աղգաւ Հայ էր բայց՝ կրօնքով պապական,
Խարութիւն չէր ցուցըներ՝ զայն չմռացայ:

Եքեղ էր Վարչաւի կամսւրջի չէնքը,
Եկեղեցւոյ մէջը՝ հայ շիրմի դէմքը,
Երկու գերեզմանից՝ հայոց գրեանքը,
Զմայլեցուց լոզմող՝ զայն չմռացայ:

Վարչաւի Օհանեան՝ ինձմէ զատուեցաւ,
Եկեղս, միաքս, ուղեղս՝ ալ շուարի յաւ.
Եկու չէի զիտեր՝ շրթունքս համբացաւ.
Դժբախտ հասայ Ժընէվ՝ զայն չմռացայ:

Դեռ Ժընէվ հասած՝ եկանք Վիէննս,
Դէս ու գէն նայեցայ և ոչ մի Հայ կայ,
Մի կառք նասելսվս կայարան եկայ,
Դէպի Ժընէվ դալս աճապարեցայ:

Ճամբանն քաղաք միջանք՝ մի մեծ լեռան
Սրճարանը գնացի, լսի թէյ խըմիմ, (դէմ
Ինձի թէյ կաթ խըմցուց մի մարդ ժըպատէմ,
Գինը ինք վճարեց՝ զայն չմռացայ:

Վերջապէս հասանք մինք Ժընէվի կայարան,
Բականք վիտուել մեր ազնիւ Տիգրան.
Գտանք ուրախութեամբ՝ մեր Օհանէսնեան,
Ուրախութեան ժամերս ևս չմռացայ:

Վաղեմի բարեկամ մը՝ եկայ հս գտայ,
Պարոն Վահանն էր սիրով զինք տեսայ,
Զիս հուր ընդունեցին՝ մի սենեակ մտայ
Պարոն Վահապ, Վահան, զոր ևս չմռացայ.

Պարոն Միքայէլեան զիս տուն հրաւիրեց,
Եկանն ալ առատ և ճոխ պատրաստեց,
Զիս անսարժանս չափազանց պատուեց,
Էր պատուասիրելն ևս չմռացայ:

Խումբ մը հայեր առին տարին զիս պարտէզ
Օղազարիկ աեսայ՝ շատ գոհ եղայ ևս,
Տեսարանին կանխտւ ևս կարօտակէզ,
Կարօտութիւնս առի՝ զայն չմռացայ:

ԺԸՆԵԼ չորս ամ, երեք ամիս մնայի,
Գրքերս վիշնաս, վեհափկ տըսեցի,
Կովկաս, Ամերիկա, շատ սպառեցի,
Սպառուելուն համար շատ ուրախացայ:

ԺԸՆԵԼ գրախտի պէս՝ գետեր կը հոսի,
Շուկաներուն մէջը սոխոկ կը խօսի,
Լեռներու տեսարանն նման Տաւրոսի,
Վերջին ծայր չքնաղ էր զայն չմոռացայ:

Հաղար ինը հարիւրին Փարիզ գնացի,
Հիանալի առեղերն լաւ այցելեցի,
Հինգ օրէն առելի մնալ չկրցի,
Շուտով ԺԸՆԵԼ դառնալս ես չմոռացայ:

* * *

Հաղար ինը հարիւր երեքի յամին,
Նոյեմբերի ամսոյ՝ քսան երեքին,
Մեկնեցանք ԺԸՆԵԼ Զուիշերիալին:
Մարտիլիան ալ տեսայ՝ զայն չմոռացայ:

ԺԸՆԵԼ մեկնելլս ինծի արւոտ ցաւ,
Բարեկամներուս սիրու մորմոքեցաւ,
Հրաժեշտի համբոյըներ փախանակուեցաւ,
Այս սրտայոյդ ժամերն՝ ես չմոռացայ:

Մարտիլի Հայերը՝ զիս շատ սիրեցին.
Ղարաթէք, Ղաղարոս, Թագւոր՝ յարգեցին.
Եռէրներով պայուսակլս լեցուցին,
Եսցունց պատուասիրելն՝ ես չմոռացայ:

Պարոն Փարթուգալեանն այցելեցի,
Ազնիւ ախար մըն էր՝ զայն շատ սիրեցի,
Ինձ գրքեր նըւիրեց յոյժ գոհ մնացի,
Նորա պատուասիրելն՝ ես չմոռացայ:

Մարտիլի մեկնեցայ՝ Աղեքսանդրիա,
Փհատեցի աւ գատց հայր Բարթողեմիա,
Ցիշեցինք հայրենիք՝ յաղթող Ռունիա,
Նոյն բերկրալի վայրկեանն ես չմոռացայ:

Հայրենակից պարան Սմբատը գտայ,
Հայրենի երկիրէն անուշ հոս կուտայ,
Բոջ բանաստեղծ մ'է՝ պարապ խօսք չտար,
Նոյն յուղման ժամերս՝ ես չմոռացայ:

Տէր Յարութիւն տեսայ բուն Խարքերգիէ
Եթէ վեղար կրէ տռաջնորդցու է,
Ակլն քաղաքին մէջ պաշտօն վարեր է,
Ասոր ներկայ կեանքը՝ ես չմոռացայ:

Տէր Ռուբէն ալ ազնիւ քանանայ մըն է,
Լաւ աղօթք կը կարգայ՝ որպէս վայել է,
Ինքը Ղանդալցի է, Թորգոմեան աանէ,
Դէմքն ալ շնորհքով է զայն չմոռացայ:

Կիւրինէն հոս եկաւ՝ Յեսու քանանան,
Հիւր եղաւ իւր փեսին՝ Թաթլոյ Պարսեան,
Շուտ մտերմացանք, շատ ազնիւ էր ան,
Նորա ընտիր ծիրքերն՝ ես չմոռացայ:

Պարսն Սահակ որդի՝ Բարսղի Ներսէսեան,
Մօտ օրից այցելեց՝ Աղեքսանդրիան,
Նախկին բարեկամին՝ զաւակըն էր ան,
Տեսնելով բերկրիլս՝ ես չմոռացայ:


Բնիկ Զէյթունցի եմ՝ Ռունեցի կըսուիմ,
Փափաքս է որ չուա հայրենիք հասնիմ,
Գուցէ օր մը ես ալ՝ պատմութեամբ խօսուիմ,
Խելքէս գլխէս անցածն՝ ես չմոռացայ:



17145

104.

թ 404



2013

